Հավելված 5
«ԲԲԿ-ԳՀԱՇՁԲ-18/09»* ծածկագրով
գնանշման հարցման հրավերի

ՊԵՏՈՒԹՅԱՆԿԱՐԻՔՆԵՐԻՀԱՄԱՐՏՊԱԳՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆԳՆՄԱՆՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԲԲԿ-ԳՀԱՇՁԲ-18/09-1

ք. Բերդ «22» մայիսի 2018 թ.

«Բերդի Բժշկական Կենտրոն» ՓԲԸ, ի դեմս տնօրեն Ա. Մարդանյանի, որըգործումէ*«Բերդի Բժշկական Կենտրոն» ՓԲԸ*-ի կանոնադրությանհիմանվրա (այսուհետ՝Պատվիրատու), միկողմից, և«ՍԱՄՆԱՆ» ՍՊԸ-ն,իդեմստնօրենՄ. Հայրապետյանի, որըգործումէ«ՍԱՄՆԱՆ» ՍՊԸ-իկանոնադրությանհիմանվրա (այսուհետ՝Կատարող), մյուսկողմից, կնքեցինսույնպայմանագիրըհետևյալիմասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է տպագրական աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետ՝ աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Աշխատանքը կատարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե կատարվել է պայմանագրի N 1 հավելվածում նշվածՏեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցինչհամապատասխանող աշխատանք.

ա) Չընդունել աշխատանքը՝ իրհայեցողությամբսահմանելովանպատշաճորակի աշխատանքը պայմանագրինհամապատասխանող աշխատանքով անհատույցփոխարինմանողջամիտժամկետ կպահանջել Կատարողից վճարելուպայմանագրի 5.2 կետովնախատեսվածտուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվելպայմանագիրըկատարելուցևպահանջելվերադարձնելու աշխատանքի համարվճարվածգումարը և պահանջել Կատարողից վճարելուպայմանագրի 5.2 կետովնախատեսվածտուգանքը.

2.1.3 Միակողմանիլուծելպայմանագիրը, եթե Կատարողնէականորենխախտելէպայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրըխախտելնէականէհամարվում, եթե՝

ա) կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան կատարված աշխատանքի արդյունքը, իսկ աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե կատարված աշխատանքըկամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և սույն պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1.Պայմանագրով Կատարողի կատարման ենթակա աշխատանքի գինը կազմում է 335080 (Երեք հարյուր երեսունհինգ հազար ութսուն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն[1]:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն կատարված աշխատանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում աշխատանքի կատարման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրինչհամապատասխանող աշխատանք կատարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[2]:

---

[1] *Եթե Կատարողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հանվում են:*

5.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են աշխատանքը կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ(ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

ՍույնպայմանագրովևսույնպայմանագրիհիմանվրակնքվածՀամաձայնագրերովպարտավորություններնամբողջությամբկամմասնակիորենչկատարելուհամարկողմերնազատվումենպատասխանատվությունից, եթեդաեղելէանհաղթահարելիուժիազդեցությանհետևանքով, որըծագելէսույնպայմանագիրըկնքելուցհետո, ևորըկողմերըչէինկարողկանխատեսելկամկանխարգելել:Այդպիսիհիրավիճակներեներկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմականևարտակարգդրությունհայտարարելը, քաղաքականհուզումները, գործադուլները, հաղորդակցությանմիջոցներիաշխատանքիդադարեցումը, պետականմարմիններիակտերըևայլն, որոնքանհնարինենդարձնումսույնպայմանագրովպարտավորություններիկատարումը:Եթեարտակարգուժիազդեցությունը շարունակվումէ 3 (երեք) ամսիցավելի, ապակողմերիցյուրաքանչյուրնիրավունքունիլուծելպայմանագիրը՝այդմասիննախապեստեղյակպահելովմյուսկողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույնպայմանագիրնուժիմեջէմտնումկողմերիստորագրմանպահից և գործում է մինչևկողմերի սույն պայմանագրովստանձնածպարտավորություններիողջծավալովկատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը[3]:

7.2 Պայմանագրիցծագած՝կողմիվճարայինպարտավորությունըչիկարողդադարելայլպայմանագրիցծագած՝հակընդդեմպարտավորությանհաշվանցով, առանցկողմերիգրավորևկնիքովհաստատվածհամաձայնության: Պայմանագրիցծագածպահանջիհրավունքըչիկարողփոխանցվելայլանձի, առանցպարտապանկողմիգրավորհամաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 ՊայմանագրումփոփոխություններևլրացումներկարողենկատարվելմիայնԿողմերիփոխադարձհամաձայնությամբ՝համաձայնագիրկնքելումիջոցով, որըկհանդիսանապայմանագրիանբաժանելիմասը:

---

[2] *Պայմանագիրը«Գնումների մասին» ՀՀօրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում հատկացվել են ֆինանսական միջոցներ և կնքվել է համաձայնագիր:*

[3] *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:*

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6Աշխատանքի կատարմանժամկետըկարողէերկարածգվելմինչև պայմանագրով այդժամկետըլրանալը՝Կատարողիառաջարկությանառկայությանդեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուիմոտչիվերացելաշխատանքիօգտագործմանպահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարմանժամկետըկարողէերկարածգվելմեկանգամմինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքովկամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարմանհամար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Պայմանագրիկապակցությամբծագածվեճերըլուծվումենբանակցություններիմիջոցով:Համաձայնությունձեռքչբերելուդեպքումվեճերըլուծվումեն ՀՀ դատարաններում:

7.11 Պայմանագիրըկազմվածէ____ էջից, կնքվումէերկուօրինակից, որոնքունենհավասարազորիրավաբանականուժ: Սույնպայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածներըհանդիսանումենպայմանագրիանբաժանելիմասը, յուրաքանչյուրկողմինտրվումէ պայմանագրիմեկօրինակ:

7.1 ՍույնպայմանագրինկատմամբկիրառվումէՀայաստանի Հանրապետությանհիրավունքը:

8.ԿՈՂՄԵՐԻՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸԵՎՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
«Բերդի Բժշկական Կենտրոն»ՓԲԸ	«ՍԱՄՆԱՆ» ՍՊԸ
Տավուշի մարզ, ք.Բերդ, Ա. Մանուկյան,25	ք. Երևան, Հասրաթյան 8/10
Բանկ «Արդշինբանկ»ՓԲԸ «Տավուշ» մ/ճ	Բանկ՝ «Հայէկոնոմբանկ»ՓԲԸ «Մետաքս» մ/ճ
Հ/Հ 2477800186580010	Հ/Հ 163218023543
ՀՎՀՀ 07806692	ՀՎՀՀ 01272957
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
« 22 » մայիսի 2018 թ. կնքված
ԲԲԿ-ԳՀԱՇՁԲ-18/09-1 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի								
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	կատարման	
							հասցեն	ժամկետը**
6	22451180	Տեղեկանք նյարդահոգ.-նարկոլ.կաբինետ.հաշվառվ չլինելու մասին-21սմx9.5սմ սպիտակ թղթի վրա, միակողմանի տպագրված	հատ	3	3000	1000	ՀՀ,Տավուշի մարզ, ք.Բերդ, Ա. Մանուկյան, 25	Առաջին մատակարարումը՝ պայմանագիրը կնքելուց հետո 20 օրացուցային օրից ոչ շուտ, հաջորդ մատակարարումները՝ պատվերն ստանալուց հետո 10 օրվա ընթացքում
11	22451180	Քաղվածք երեխայի բժշկ.հսկող.ամբուլատ.քարտից-/ՀՀԱՆ 03.07.2013թ N35-Նհրաման/ Հավելված 6/ A5 ֆորմատ երկկողմանի տպագրվ.,սպիտակ թղթի վրա	հատ	2.3	2300	1000		
12	22451180	Քաղվածք մեծահասակի ամբուլատ.բժշկակ.քարտից-/ՀՀԱՆ 03.07.2013թ N35-Նհրաման/ Հավելված 3 A4ֆորմատ սպիտակ թղթի վրա միակողմանի տպագրվ.	հատ	2.3	2300	1000		
16	22451180	Ուղեգիր նեղ մասնագիտ.խորհրդատվ.-/ՀՀԱՆ 28.11.2008թ N1746-Ահրաման/ Հավելված 1.1/ A-6 ֆորմատ 97մմx21սմ,միակղմանի տպված սպիտակ թղթի վրա	հատ	1.7	17340	10200		
21	22451180	Դրամարկղային մուտքի օրդեր-A5ֆորմատ/ 15սմx20.5սմ /միակողմանի տպագրվ., սպիտակ թղթի վրա	հատ	2.3	2300	1000		
28	22451180	Հիվանդանոցային բժշկական օգնության ձև 0001-Հավելված 1 ՀՀԱՆ2011թ N-Ահրաման/ A4ֆորմատ,երկկողմանի տպագրվ., սպիտակ թղթի վրա	հատ	4.5	5850	1300		
29	22451180	Քաղվածք ամբուլատ.,ստացիոնար հիվանդի բժշկ.քարտից-Բժշկական փաստաթուղթ ձևN027, A5 ֆորմատ 15սմx21սմ /երկկողմանի տպագրվ., սպիտակ թղթի վրա	հատ	2.3	2300	1000		
40	22451180	Բիոքիմիական լաբորատորիա /անալիզի արդյունքի ձևաթ./-21սմx97մմ միակողմանի տպագրվ., սպիտակ թղթի վրա, Բերդի ԲԿ-ի անվանման նշումով	հատ	2	10000	5000		
44	22451180	Արյան կլինիկական քննություն-93մմx10.5սմ միակողմանի տպագրվ., սպիտակ թղթի վրա, Բերդի ԲԿ-ի անվանման նշումով	հատ	2	1200	600		
45	22451180	Մեզի հետազոտություն-ՀՀ ԱՆ 25.11.2013թ. 76-Ն հրամանի Հավելված 1,Բժշկական ձև 12,	հատ	2.3	13800	6000		

		A5 / 15սմx20.5սմ /երկկողմանիտպագրվ., սպիտակ թղթի վրա						
46	22451180	Արյան հետազոտություն- ՀՀ ԱՆ 25.11.2013թ. 76-Ն հրամանի Հավելված 1,Բժշկական ձև 11, A5 ֆորմատ / 15սմx20.5սմ /երկկողմանի տպագրվ., սպիտակ թղթի վրա	հատ	2.3	11500	5000		
47	22451180	Ճիճվային ինվազիայի վերաբերյալ կղանքի քննություն Ձև N112, A5 / 14.5սմx20.5սմ /միակողմանի տպագրվ., սպիտակ թղթի վրա	հատ	2.3	2300	1000		
58	22451180	ԱԱՊ ծառայությունների մատուցման հաշվառման- ՀՀ ԱՆ 03.07.2013թ. 35-Ն հրամանի Հավելված 4, A4 ֆորմատի սպիտակ թղթի վրա, երկկողմանի տպագր.	հատ	4	40000	10000		
66	22451180	Դեղատոմս հոգեմետ դեղերի համար Սահմանված ՀՀ կառավ.09.11.2017թ. 1402-Ն որոշմամբ Դեղատոմսերի ձևN2 148մմx210մմ չափսերով A5 ֆորմատի սպիտակ թղթի վրա,երկկողմանի տպագր.	հատ	2.3	2300	1000		
67	22451180	Դեղատոմս Սահմանված ՀՀ կառավ.09.11.2017թ. 1402-Ն որոշմամբ Դեղատոմսերի ձևN3 148մմx210մմ չափսերով A5 ֆորմատի սպիտակ թղթի վրա, երկկողմանի տպագր.	հատ	2.3	2300	1000		
68	22451180	Դեղատոմս դեղի բազմակի գրման Սահմանված ՀՀ կառավ.09.11.2017թ. 1402-Ն որոշմամբ Դեղատոմսերի ձևN4 A4 ֆորմատի սպիտակ թղթի վրա	հատ	4.5	4500	1000		
74	22451180	Բժշկի նշանակումների կատարման հաշվառման թերթիկ- A4 ֆորմատի /երկկողմանի տպագրվ., սպիտակ թղթի վրա	հատ	4.3	11610	2700		
75	22451180	Վիճակագրական քարտ- Բժշկական փաստաթուղթ Ձև 066, A5 ֆորմատի 15սմx21սմ, սպիտակ թղթի վրա, երկկողմանի	հատ	2.3	5750	2500		
76	22451180	Վարորդի սթափության վիճակի զննության արձանագրություն – ՀՀ Կառավարության 19.03.2009թ. N277-Ն որոշման Հավելված 2, A4 ֆորմատի սպիտակ թղթի վրա, երկկողմանի տպ.,	հատ	4.3	4300	1000		
77	22451180	Տեղեկանք Սոց.փաթեթի շահառու - ՀՀ ԱՆ10.02.2015թ. 05-Ն հրամանի Հավելված 2 A5 ֆորմատի 15սմx21սմ, սպիտակ թղթի վրա, միակողմանի	հատ	2.3	3220	1400		
78	22451180	Ուղեգիր-10սմx21սմ, սպիտակ թղթի վրա, միակողմանի	հատ	2	2000	1000		
79	22451180	ՇԲՕԿ -ի թերթիկ- ՀՀԱՆ 11.07.2014թ. N 49 - ՆհրամանիՀավելված1, ՀՀԱՆ 24.07.2013թ. N 39 - ՆհրամանիՀավելված2, A4 ֆորմատի սպիտակ թղթի վրա, երկկողմանի տպ.,	հատ	4.3	4300	1000		
80	22451180	Ուղեկցող թերթիկ- ՀՀԱՆ	հատ	2.3	1610	700		

		24.07.2013թ. N 39 - ՆիրամանիՀավելված7, A4 ֆորմատի սպիտակ թղթի վրա, երկկողմանի տպ.,						
81	22451180	Երեխայի հիվանդության պատմագիր- ՀՀԱՆ 14.02.2014թ. N 02 - ՆիրամանիՀավելված2, A4 ֆորմատի սպիտակ թղթի վրա, միակողմանի տպ., 8 թերթանի	հատ	80	80000	1000		
82	22451180	Մեծահասակի հիվանդության պատմագիր- ՀՀԱՆ 14.02.2014թ. N 02 - ՆիրամանիՀավելված 1, Ձև 1, A4 ֆորմատի սպիտակ թղթի վրա, միակողմանի տպ., 8 թերթանի	հատ	80	80000	1000		
83	22451180	Ընդունման և բուժման համար տրվող համաձայնություն- A4 ֆորմատի /միակողմանի տպագրվ., սպիտակ թղթի վրա, «Բերդի Բժշկական Կենտրոն» նշագրումով	հատ	4.3	4300	1000		
84	22451180	Հղիի հսկողության պարտադիր ծավալների հաշվառման ձև (Ձև 005)-ՀավելվածՀՀԱՆ 04.02.2015թ 03 –Ն հրամանի (A4) ֆորմատ սպիտակ թղթի վրա, միակողմանի տպագր.	հատ	4.3	4300	1000		
87	22451180	Ծննդաբերության պատմագիր- /ներառյալներդիրները/ ՀՀԱՆ14.02.2014թ 02- ՆիրամանիՀավելված 3, 09.01.2017թ 01-Նիրամանի Հավելված 1, A4 ֆորմատի սպիտակ թղթի վրա, երկկողմանի, 8թերթանի	հատ	80	10400	130		
	ընդամենը				335080			

** աշխատանքի կատարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 15-ը:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

«Բերդի Բժշկական Կենտրոն»ՓԲԸ
Տավուշի մարզ, ք.Բերդ, Ա. Մանուկյան,25
Բանկ «Արդշինբանկ»ՓԲԸ «Տավուշ» մ/ճ
Հ/Հ 2477800186580010
ՀՎՀՀ 07806692

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«ՍԱՄՆԱՆ» ՍՊԸ
ք. Երևան, Հասրաթյան 8/10
Բանկ՝ «Հայէկոնոմբանկ»ՓԲԸ «Մետաքս» մ/ճ
Հ/Հ 163218023543
ՀՎՀՀ 01272957

(ստորագրություն)
Կ.Տ.